ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ ՀՀ Լոռու մարզ, գ. Միխայելովկա
էլ. փոստ mikhayelovka.lori@mta.gov.am

☎ 093 261888

Ե-31

03 ապրիլի 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ուղարկում ենք Միխայելովկա համայնքի ավագանու թիվ 05-Ա, թիվ 06-Ա որոշումները, համայնքի ղեկավարի թիվ 01-Ա կարգադրությունը, համայնքի ղեկավարի թիվ 09-Ա, թիվ 10-Ա որոշումները և քարտուղարի թիվ 04-Ա հրամանը:

Առդիր՝ 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ • ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ • 0720059 5

կատ.Վ.Դալլաքյան

հեռ.094899068

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ՄԱՐՏԻ 2017թվականի N 05-Ա

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով. ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն Միխայելովկա համայնքի բյուջեի բարձրագույն կրթություն ծրագրից որպես ուսման վարձ Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի ուսանողուհի Արևիկ Արթուրի Բաղդասարյանին հատկացնել 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Ավագանու անդամներ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Դիլբարյան Էդիկ		-	-
2. Դիլբարյան Վլադիմիր		-	-
3. Հակոբյան Աղունիկ		-	-
4. Վարդանյան Արսեն		-	-
5. Մնացականյան Նունե		-	-

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՐՏԻ 2017թվականի N 06-Ա

ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, ավագանին որոշում է՝

Հաստատել Միխայելովկա համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում համայնքի ղեկավարի կողմից կատարված փոփոխությունները և համայնքի սեփականության գույքի ցանկից հանել հետևյալ գույքը՝

1. Հեռուստացույց ORVIKA-2 հատ
2. Համակարգիչ INTEL E 5700- 1 հատ
3. Տպիչ CANON M 190-1 հատ
4. Աթոռ-10հատ

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
1.	Դիլբարյան Էդիկ		-	-
2.	Դիլբարյան Վլադիմիր		-	-
3.	Հակոբյան Աղունիկ		-	-
4.	Վարդանյան Արսեն		-	-
5.	Մնացականյան Նունե		-	-

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԴԻԼԲԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

06 ՄԱՐՏԻ 2017թվականի N 01-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍ

ԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, կարգադրում եմ՝

կազմել համայնքային սեփականություն հանդիսացող գույքի դուրս գրման հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Հանձնաժողովի նախագահ՝ Վալյա Դալլաքյան-աշխատակազմի քարտուղար,
2. Հանձնաժողովի անդամներ՝ Սեդա Յավրումյան- աշխատակազմի առաջատար մասնագետ,
3. Սպարտակ Մկրտիչյան -աշխատակազմի առաջին կարգի մասնագետ,
4. Արսեն Վարդանյան- ավագանու անդամ:

Հանձնաժողովին հանձնարարել եռօրյա ժամկետով ավարտել դուրս գրման աշխատանքները և ավագանուն ներկայացնել եզրակացություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԴԻԼԲԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՐՏԻ 2017թվականի N 09-Ա

ԹԵԼՄԱՆ ՄԻԽԱՅԻԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Թելման Մանուկյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 2398113 վկայականը , <<Սուսսամ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագիծը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 8-22-րդ հոդվածներով. ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Միխայելովկա համայնքի 1-ին փողոց 7-րդ նրբանցք տուն 1 հասցեում գտնվող Թելման Միխայիլի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 0,339 հա բնակելի կառուցապատման հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումների իրականացված, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում չգտնվող, անվտանգության գոտիներում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 2015թ. կառուցված 322.44 ք.մ մակերեսով ջերմոցի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Թելման Միխայիլի Մանուկյանի սեփականության իրավունքը:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 106410 ՀՀ դրամ /մեկ հարյուր վեց հազար չորս հարյուր տաս/ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Տաշիրի տարածքային ստորաբաժանումում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՄԱՐՏԻ 2017թվականի N 10-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով և "Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, նկատի ունենալով Միխայելովկա համայնքի բնակիչ Շահեն Միրզոյանի դիմումը, որոշում եմ՝

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բնակելի տունը , բաց պատշգամբը, աստիճանները, բաղնիքը, մառանը,անասնագոմը, պարիսպը և տնամերձ հողամասը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքում և չեն հակասում գյուղաշինական նորմերին, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սերվիտուտ չեն առաջացնում, ինչպես նաև հաշվառված չեն որպես ինքնակամ կառույցներ, Միխայելովկա համայնքի 2 փողոց տուն 33 հասցեում գտնվող Շահեն Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող 173.37 քառ. մ բնակելի տան, 20,55 քառ.մ բաց պատշգամբի, 3,20 քառ. մ աստիճանների, 6,84 քառ.մ բաղնիքի, 27,80 քառ.մ մառանի, 38,70 անասնագոմի, 12,27 քառ.մ պարիսպի և 0.12305 հա տնամերձ հողամասի նկատմամբ կատարել հիմքի վերականգնում:

2. Ճանաչել նշված հասցեում գտնվող 173.37 քառ. մ բնակելի տան, 20,55 քառ.մ բաց պատշգամբի, 3,20 քառ. մ աստիճանների, 6,84 քառ.մ բաղնիքի,

27,80 քառ.մ մառանի, 38.70 անասնագոմի, 12,27 քառ.մ պարիսպի և 0.12305 հա հա տնամերձ հողամասի սահմանները ըստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Տաշիրի տարածքային ստորաբաժանում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.lori@mta.gov.am

Հ Ր Ա Մ Ա Ն

28 ՄԱՐՏԻ 2017թվականի N 04-Ա

ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158,159,161 հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ, հրամայում եմ՝

համայնքապետարանի հաշվետար օպերատոր Քանաքարա Յավրումյանին տրամադրել 2017թվականի արձակուրդը ս/թ ապրիլի 3-ից մինչև մայիսի 1-ը ներառյալ:

Աշխատակազմի քարտուղար՝ **ՎԱԼՅԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ**